# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ՀՀ ՏԿԵՆ կարիքների համար կազմակերպված «ՏԿԵՆ-ՆԸ-ՀՄԱԾՁԲ-2026/58Փ» ծածկագրով գնման ընթացակարգի[i] գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ

մեկնարկ՝ 03.07. 2026թ.
ժամը՝ 09:30
ավարտ՝ 07.07.2026թ.
ժամը 11:00

*Գնահատող հանձնաժողովի կազմը՝*

***Հանձնաժողովի նախագահ՝***

| | |
|---|---|
| ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության փորձագետ | Նորիկ Մնոյան |

***Հանձնաժողովի անդամներ՝***

| | |
|---|---|
| ««Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ավագ ինժեներ | Գևորգ Խեչումյան |
| «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ինժեներ | Նարեկ Հայրապետյան |
| «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հիմնանորոգման ծրագրերի կառավարման բաժնի ինժեներ | Ռիմա Հարությունյան |
| ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության օրենսդրության բաժնի գլխավոր իրավաբան | Աննա Ավագյան |

***Հանձնաժողովի քարտուղար՝***

| | |
|---|---|
| ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի պետ | Ջանուշ Հայրապետյան |

**«ՏԿԵՆ-ՆԸ-ՀՄԱԾՁԲ-2026/58Փ» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) հայտերի բացման և գնահատման նիստի օրակարգը**

1. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գնի վերաբերյալ:
2. Տեղեկություն՝ Ընթացակարգի հայտի բացման վայրի, օրվա և ժամի մասին:
3. Տեղեկություն՝ Ընթացակարգի հայտ ներկայացրած մասնակցի վերաբերյալ:
4. Տեղեկություն՝ հայտը պարունակող ծրարը կազմելու և սահմանված կարգին համապատասխան ներկայացնելու վերաբերյալ:
5. Տվյալներ՝ բացված ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված կարգին համապատասխան կազմված լինելու մասին:
6. Տվյալներ՝ Ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակցի առաջարկած գնի մասին:
7. Ընթացակարգի հանձնաժողովի գնահատման արդյունքների հաստատման մասին:

### 1. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների գնի վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման գինը.

| Չափաբաժնի համարը | | Չափաբաժնի անվանումը |
|---|---|---|
| համարը | գնման գինը | |
| 1 | 100 100 | Մ-3, ՀՀ սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ65+383 հատվածում գտնվող ուղեանցի ապամոնտաժման և նոր ուղեանցի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ |

## 2. Տեղեկություն՝ Ընթացակարգի հայտի բացման վայրի, օրվա և ժամի մասին

2.1 Ընթացակարգի հայտը թղթային եղանակով բացվել է հրավերով սահմանված ժամկետում՝ 2026 թվականի հուլիսի 3-ին՝ ժամը 9:30-ին՝ ՀՀ ք. Երևան,Կառավարական տուն 3, 639 սենյակ հասցեում:

## 3 . Տեղեկություն՝ Ընթացակարգի հայտ ներկայացրած մասնակցի վերաբերյալ

3.1 Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում հայտ է ներկայացրել 1 /մեկ/ մասնակից.

3.2 Ընթացակարգի հայտ ներկայացրած մասնակցի տվյալները՝ անվանումը, գտնվելու կամ բնակության վայրը, կապի միջոցները.

| № | Մասնակցի անվանումը | Գործունեության հասցեն | ՀՎՀՀ | Էլեկտրոնային հասցե, հեռախոսահամար |
|---|---|---|---|---|
| 1 | «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ | ՀՀ ք. Երևան, Կոմիտասի 54բ. | 01508665 | ekspertizaproektov@mail.ru<br>Հեռ. +374 93 80 00 09 |

## 4. Տեղեկություն՝ հայտը պարունակող ծրարը կազմելու և սահմանված կարգին համապատասխան ներկայացնելու մասին

4.1 Մասնակցի կողմից ներկայացված ծրարը կազմվել և ներկայացվել է Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

## 5. Տվյալներ՝ բացված ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված կարգին համապատասխան կազմված լինելու մասին

5.1 Մասնակցի հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ բոլոր փաստաթղթերն առկա են և կազմված են Ընթացակարգի հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան:

## 6. Տվյալներ՝ Ընթացակարգի հայտ ներկայացրած մասնակցի առաջարկած գնի մասին

6.1 Ընթացակարգի շրջանակներում մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը.

Չափաբաժին 1: Մ-3, ՀՀ սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-ՀՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ65+383 հատվածում գտնվող ուղեանցի ապամոնտաժման և նոր ուղեանցի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ

| № | Մասնակցի անվանումը | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ | 80 000 | 16 000 | 96 000 |

6.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են /ճիշտ են/:

## 7. Ընթացակարգի հանձնաժողովի գնահատման արդյունքների հաստատման մասին

*Գնահատող հանձնաժողովը որոշեց.*

7.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 23-ի N 952-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Մարդկային զոհերի, մարդու առողջությանն ու շրջակա միջավայրին զգալի վնասի, խոշոր նյութական կորուստների և մարդու կենսագործունեության բնականոն պայմանների խախտման հանգեցնող կամ նման իրավիճակներ առաջանալու վտանգի դեպքում հրատապ համարվող կարիքների բավարարման շրջանակում շինարարական աշխատանքների գնման գործընթացի կազմակերպման» կարգի 3-րդ կետի 6-րդ ենթակետով և հիմք ընդունելով հանձնաժողովի գնահատման արդյունքները Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել՝ «ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ին:

7.2 Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով՝ անգործության ժամկետ չսահմանել:

7.3 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

7.4 Ընթացակարգի ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

*Ընդունվել է որոշում՝ կողմ- 4, դեմ-0*
*Բացակայում էր հանձնաժողովի անդամ Գևորգ Խեչումյանը*

## Հանձնաժողովի անդամների ստորագրություն՝

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Նորիկ Մնոյան | ........................ |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Նարեկ Հայրապետյան | ........................ |
| | Ռիմա Հարությունյան | ........................ |
| | Աննա Ավագյան | ........................ |
| Քարտուղար՝ | Ջանուշ Հայրապետյան | ........................ |

[i] Սույն գնումն իրականացվում է համաձայն՝ «Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդված 1-ին մասի 2-րդ կետի և ՀՀ կառավարության 23.06.2022թ. թիվ 952-Ն որոշման, Ֆինանսական միջոցներ նախատեսվել են ՀՀ կառավարության 04.06.2026թ. N 783-Ն որոշմամբ